«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ՝ ԳՐԱՃԱՆԱՉՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԵՆԹԱԹԵՄԱ՝ Ի՞ՆՉ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԿԱՐԵԼԻ Է ԻՐԱԿՆԱՑՆԵԼ ԳՐԱՃԱՆԱՉՈՒԹՅԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

ԱՌԱՐԿԱՆ՝ ԴԱՍՎԱՐ

ՀԵՏԱԶՈՏՈՂ ՈՒՍՈՒՑԻՉ՝ ԵՂՅԱՆ ՄԱՐԻԱ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԻ Մ. ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……..3

1.ԳԼՈՒԽ1.

ԳՐԱՃԱՆԱՉՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. 1.Գրաճանաչության հնչյունային մեթոդի առանձնահատկությունները……4

1. 2. Գրաճանաչության ժամանակակից մեթոդները հայ դպրոցում……6

ԳԼՈՒԽ 2. ԳՐԱՃԱՆԱՉՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԴՊՐՈՑՈՒՄ

2.1 Հարցախույզի վերլուծություն……9

2.2.Գրաճանաչության գործընթացի կազմակերպման մեր փորձը……...13

Եզրակացություններ. 23

Օգտագործված գրականության ցանկ. 24

Ներածություն

Ուսումնասիրության թեմայի արդիականությունը: Հայ դպրոցն ունի գրաճանաչության մեթոդների հարուստ գանձարան, որը վկայում է հայ ժողովրդի, հայ մտավորականների՝ աճող սերնդի կրթության, ասել է՝ ազգապահպանման նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի առկայությունը:

Հայ դպրոցում գործադրված գրաճանաչության մեթոդներից շատերը կարճ կյանք են ունեցել, սակայն մի մասից առանձին տարրեր այսօր էլ դեռևս օգտագործվում են հայ մանուկներին գրաճանաչ դարձնելու գործընթացում: Ներկայացնենք հայ դպրոցում պատմականորեն կիրառված գրաճանաչության մեթոդները:

Փոխվել են առաջինդասարանցիները, այլ են նրանց մտածելակերպն ու աշխարհայացքը, նախասիրություններն ու զբաղմունքները: Այսօր առաջինդասարանցիների կյանքում մեծ տեղ են զբաղեցնում թվային տեխնոլոգիաները, ինչը չի կարող չանդրադառնալ նաև ուսումնական գործընթացի կազմակերպման վրա. միայն ավանդական մեթոդների կիրառումն այլևս արդյունավետ չի լինի:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է վաղ ուսուցման պայմաններում գրաճանաչության նորովի կազմակերպման պահանջներով և դպրոցի և ուսուցիչների ոչ լիարժեք պատրաստականությամբ:

Ուսումնասիրության նպատակն է գրաճանաչության գործընթացը սովորողների համար հնարավորինս հետաքրքիր և արդյունավետ դարձնելուն ուղղված մեթոդական ցուցումների մշակումը:

Ուսումնասիրության խնդիրները:

1. Ուսումնասիրել գիտամեթոդական գրականություն հիմնախնդրի վերաբերյալ:
2. Պարզել գրաճանաչության մեթոդների ընտրության մոտեցումները և դրանց կիրառման փորձը վաղ ուսուցման պայմաններում:
3. Վերլուծել գրաճանաչության կազմակերպման դժվարություններն ու դրանց հաղթահարման միջոցները:
4. Վերլուծել և ամբողջացնել գրաճանաչության արդյունավետ կազմակերպման ժամանակակից մոտեցումները և մշակել մեթոդական ցուցումներ:

ԳԼՈՒԽ1.

ԳՐԱՃԱՆԱՉՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.1. Գրաճանաչության հնչյունային մեթոդի առանձնահատկությունները

Յուրաքանչյուր ժողովրդի մշակույթի և դպրոցի պատմությունը սկիզբ է առնում ազգային գրերի ստեղծումից և դրանց ուսուցումից: Պարզվում է՝ որևէ լեզվի գրերի ուսուցման մեթոդների ընտրությունը պայմանավորվում է նաև այդ լեզվի ու հենց գրի առանձնահատկություններով: Օրինակ՝ հայ գրերի ստեղծումից մինչև այսօր հազարամյակների ընթացքում փոխվել են ոչ միայն նրա համակարգն ու տիպը, այլև գրության կարգը: Սկզբում գրել են սյունակներով՝ վերից վար և աջից ձախ հաջորդականությամբ: Այժմ միայն արաբական գիրն է աջից ձախ հաջորդականությամբ և չինական ու ճապոնական հիերոգիֆերն են, որ գրվում են վերից վար և աջից ձախ հաջորդականությամբ: Բնականաբար, գրերի ուսուցման մեթոդները նույնպես կլինեն տարբեր:

Հայերենի զարգացման ու ձևավորման ընթացքը բաժանվում է չորս շրջանի, որոնք համապատասխանաբար կոչվում են՝

1. Հնագույն կամ նախագրային, որը ընդգրկում է հայերենի կազմավորումից մինչև 5-րդ դարի սկիզբը՝ մինչև հայ գրերի գյուտը,
2. Հին հայերեն կամ գրաբար, որը գրավոր կերպով ավանդված է 5 - 11-րդ դարերից,
3. Միջին հայերեն, որ ավանդված է միջնադարյան, հատկապես կիլիկյան շրջանի մատենագրության մեջ 12 - 16 դարեր,
4. Նոր կամ աշխարհաբար՝ 17-րդ դարից մինչև մեր ժամանակները:

Հայերենի զարգացման հնագույն կամ նախագրային շրջանը, ինչպես նշվեց, ընդգրկում է վաղնջական ժամանակներից մինչև 5-րդ դարը, երբ ստեղծվեցին հայոց գրերը:

Գրաճանաչության մեթոդիկայի հիմքը նախապես եղել է տառը: Այդ է պատճառը, որ պատմության ընթացքում գերակշռել են գրաճանաչ դարձնելու տառային մեթոդները:

Հայ իրականության մեջ գրաճանաչության գործընթացում հնչյունն ընդունվեց որպես հիմք, և գերիշխեց հնչյունային մեթոդը, երբ Մաշտոցն ու իր սաներն սկսեցին հայ մանուկներին կարդալ – գրել սովորեցնել՝ տարածելով Հայոց այբուբենը (հիշենք, որ դա 405 թվականն էր): Հնչյունային կամ հնչական մեթոդը փոխանցվեց մանկավարժական մտքի պատմության փուլերով: 19-րդ դարում գիտակցվեց մաշտոցյան այբուբենի հնչյունային լինելու առավելությունն ու արժեքը և գրաճանաչության գիտական որոշակի սկզբունքների հերթագայությամբ՝ վերջնականապես ընդունվեց հնչյունային մեթոդը: Այն Աղայանի շնորհիվ կատարելագործվեց, գիտականորեն հիմանավորվեց, հրատարակված այբբե-նարանների միջոցով փոխանցվեց և հաստատապես մտավ հայ դպրոց: Այսօր էլ մասնագիտական գրականության մեջ այն անվանվում է Աղայանի մեթոդ:

Հնչող խոսքի դիտարկման ճանապարհով գրաճանաչության գործընթացը խարսխվում է երեխաների խոսքային կարողությունների վրա. երեխաները դպրոց գալու պահին արդեն տիրապետում են բանավոր խոսքի մի շարք առանձնահատկությունների: Այս մեթոդն ուսուցիչներին հասկանալի է և մատչելի, քանի որ իրենց ծանոթ գրաճանաչության մեթոդիկայում բծախնդրորեն մշակված են հնչյունային աշխատանքի քայլերն ու հնարները և հիմնավորված, որ գրաճանաչության գործընթացի լեզվաբանական հիմքը հայոց լեզվի հնչյունային շերտն է՝ հնչյունաբանությունը:

1.2.Գրաճանաչության ժամանակակից մեթոդները հայ դպրոցում

Գրաճանաչության մեթոդիկայի պատմական զարգացման գործընթացում մեկը մյուսին փոխարինել են տարբեր մանկավարժահոգեբանական հիմնավորումներ ունեցող մեթոդներ, հիմնարար տեսություններ, որոնք անցնում են այբբենարանից այբբենարան, մեթոդիկայից մեթոդիկա։

Այսօր հայ իրականության մեջ գործում են գրաճանաչության ժամանակակից վերլուծական - համադրական հնչյունավանկային և վերլուծական - համադրական հնչյունաբառային մեթոդները։

Այդ երկու մեթոդների դեպքում էլ աշխատանքն ընթանում է խոսքի ամենամեծ միավորի՝ պատմության վերլուծությունից՝ հասնելով մինչև հնչյուն - տառ։ Բառի հնչյունային վերլուծությունը նախորդում է համադրման փուլին, սակայն երկու փուլերը սերտորեն կապված են, որովհետև նոր հնչյունի ուսումնասիրությունն իրականանում է բառի շուրջ վերլուծական և համադրական աշխատանքի միջոցով։ Այսպիսով հնչյուն - տառերի ուսուցումն ընթանում է հնչյունից տառը գնացող ուղիով, աշակերտը նախ՝ ծանոթանում է, ընկալում անծանոթ հնչյունը, հետո սովորում է այդ հնչյունի տառերը՝ մեծատառը և փոքրատառը։

Վերլուծական - համադրական հնչյունավանկային և վերլուծական - համադրական հնչյունաբառային մեթոդները ժամանակակից արդյունավետ մեթոդներից են, որովհետև ուսուցումը հենվում է սովորողների ունեցած խոսքային կենսափորձի վրա։ Հնչյունային վերլուծական - համադրական մեթոդներով սովորողներին գրաճանաչ դարձնելու գործընթացում բավականին ժամանակ է հատկացվում հնչյունային աշխատանքին, որը մեծ եռանդ ու ջանքեր է պահանջում և՛ ուսուցչից, և՛ սովորողից։

Այս գործընթացն իրականացվում է տրամաբանորեն իրար հետ շաղկապված , մեկը մյուսին նախապատրաստող հինգ քայլաշարով.

- հնչող խոսքի ունկնդրում և վերարտադրում,
- խոսքից՝ նախադասության, նախադասությունից՝ բառի անջատում և արտասանում,

- արտասանած բառի վանկային վերլուծություն,
- բառի մեջ մտնող հնչյունների արտաբերում, բառի մեջ դրանց տեղի որոշում, արտաբերման նրբությունների քննարկում,
- հնչյունի պատկերի՝ տառի դիտարկում:

Գրաճանաչության ուսուցումն այսօր իրականացվում է փուլային մոտեցմամբ՝ համակարգված և կանոնակարգված ձևով:

Գծապատկեր 1



Նախապատրաստական շրջանի հիմնական նպատակը սովորողներին կարդալ – գրելուն նախապատրաստելն է: Նախապատրաստական շրջանը ոչ միայն անհրաժեշտ, այլև խիստ կարևոր է, քանի որ հետագա աշխատանքի հաջողությունը մեծ չափով կախված է նաև սովորողների խոսքի, հնչյունային լսողության, մանր մկանների զարգացման, ինչպես նաև ուսումնական գործունեություն իրականացնելու պատրաստակամության և պատրաստականության մակարդակից: Երեխաների մեծ մասն առայժմ դպրոց է գալիս չնախապատրաստված, ուստի այդ նախապատրաստումը պետք է ստանա դպրոցում՝ ժամանակակից մանկավարժական պահանջներին համապատասխան:

Պրոֆեսոր Ա. Տեր-Գրիգորյանն ամփոփեց ու ստեղծագործաբար վերամշակեց հնչյունային մեթոդն ու դրա գործադրման հնարները՝ դիտարկելով նաև գրաճանաչության գործընթացի ինքնատիպությունը, արդյունքներն ու այլ մեթոդների նկատմամբ վերլուծական - համադրականի առավելությունները:

Հնչյունային վերլուծական - համադրական մեթոդով աշխատելիս շատ ժամանակ է տրամադրվում հնչյունների շուրջ տարվող աշխատանքին՝ մեծ ջանքեր և եռանդ պահանջելով ուսուցչից և սովորողից:

Դպրոցական ուսումնառությանը պատրաստ լինել չի նշանակում միայն գրել - կարդալ, հաշվել իմանալ, այլ ընդգրկում է երեխայի անձի բոլոր կողմերը՝ սկսած ֆիզիկական զարգացումից մինչև որոշակի գիտելիքների և կարողությունների առկայությունը: Սովորաբար առանձնացվում են երեխաների՝ դպրոցին պատրաստվածության չորս ոլորտ՝ սոցիալական, ֆիզիկական, հուզակամային, իմացական:

Վեց տարեկան երեխաների՝ ուսումնական գործունեության պատրաստվածությանը նշված հիմնախնդիրներին պետք է մանրամասնորեն ծանոթ լինի առաջին դասարանում դասավանդող յուրաքանչյուր ուսուցիչ և հաշվի առնի դրանք իր աշխատանքային գործունեության ընթացքում: Նախապրբենական շրջանի ուսումնական խնդիրները կարելի է ներկայացնել գծապատկեր 2-ով:



ԳԼՈՒԽ 2. ԳՐԱՃԱՆԱՉՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԴՊՐՈՑՈՒՄ

2.1. Հարցախույզի վերլուծություն

Ուսումնասիրության նպատակը գրաճանաչության կազմակերպման ժամանակակից մոտեցումների վերհանումն էր:

Նախանշված նպատակին հասնելու համար իրականացրել ենք հարցախույզ ուսուցիչների շրջանում: Ներկայացնենք հարցերը և դրանց վերլուծությունները:

Հարց 1. Համաձա՞յն եք այն տեսակետին, որ ուսումնական խնդիրների լուծման իմաստով ամենաբարդը գրաճանաչության կազմակերպման շրջանն է: Հիմնավորե՛ք:



Հարցմանը մասնակցած ուսուցիչների 95%-ը համակարծիք են, որ տարրական դպրոցի մայրենիի առարկայական չափորոշչով և ուսումնական ծրագրով

սահմանված պահանջները բավարարելը գրաճանաչության շրջանում իսկապես բարդ է: Բարդությունը պայմանավորված է նաև նրանով, որ ժամանակակից դպրոցում փոխվել են պահանջները ուսումնական գործընթացի մոտեցումների նկատմամբ: Յուրաքանչյուր սովորող ունի իր առանձնահատկություններն ու հնարավորությունները, պատկերացումները, ուստի ուսումնական գործընթացում պետք է կիրառվի տարբերակված մոտեցում:

Հարց 2. Դժվարություններ առաջանու՞մ են գրաճանաչության կազմակերպման ընթացքում: Եթե այո, նշե՛ք օրինակներ:



Հարցմանը մասնակցած ուսուցիչների 97%-ը նշել է, որ գրաճանաչության շրջանում հանդիպում են դժվարություններ: Ներկայացնենք դրանցից մի քանի օրինակ.

1. Սովորողների մի մասը գալիս է ընտանիքից՝ առանց դպրոցին ինչ-որ կերպ նախապատրաստվելու:
2. Գնալով ավելի մեծ թիվ են կազմում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողները խմբում, ինչը լրացուցիչ լարվածություն է առաջացնում ուսուցչի աշխատանքում:

3. Գրելու կարողության ձևավորման ընթացքում սովորողների համար բարդ է պահպանել վայելչագրության կանոնները:
4. Սովորողներն ավելի վարժ են տիրապետում թվային տեխնոլոգիաներին և սիրում են գունեղ ու տեսաձայնային հնարավորություններով նյութեր. նրանց դժվար է գրավել միայն տպագիր ուսումնական նյութերով:

Եվ ուսուցիչների ընդամենը 3%-ն է նշել, որ հազվադեպ է հանդիպում դժվարությունների, մասնավորապես՝ գրուսուցման միայն 1-ին փուլում, երբ սովորողները շփոթում են նոր սովորած մի քանի տառերը: Սակայն ուսուցիչների կարծիքով՝ դա արագ հաղթահարվում է:

Հարց 3. Նշե՛ք գրաճանաչության արդյունավետ կազմակերպման աշխատանքներից մի քանիսը, որ կիրառում եք:

Ուսուցիչների պատասխաններից առանձնացրել ենք հետևյալները.

1) Ընդօրինակել ուսուցչին՝ տառը ձեռքի շարժումով գրելով օդում:
2) Տառապատկերը ստանալ թելերի, լարերի, ծեփամածիկի օգնությամբ:
3) Համեմատել կամ հակադրել միևնույն մասնիկներն ունեցող տառերը:
4) Հաճախ խրախուսել սովորողներին:
5) Կազմակերպել վայելչագրության մրցույթներ:
6) Տասնյակ տառերի մեջ գտնել օրվա սովորած տառը և այլն:

Հարց 4. Ձեր կարծիքով՝ Այբբենարանն օգնու՞մ է գրաճանաչության գործընթացի արդյունավետ կազմակերպմանը:

Հարցմանը մասնակցած ուսուցիչների կարծիքով՝ Այբբենարանը հետաքրքրաշարժ, ուսուցանող, միտքն ու երևակայությունը շարժող բազմաթիվ լեզվատրամաբանական առաջադրանքներով լեցուն գիրք է, որի միջոցով գրաճանաչությունը դառնում է գրավիչ և հետաքրքրական սովորողների համար:

Հարց 5. Արդյունավե՞տ է արդյոք գրաճանաչությունը կազմակերպել խաղային տեխնոլոգիայի կիրառմամբ: Հիմնավորե՛ք:

Ուսուցիչները համոզված են, որ վեց տարեկանների հետ աշխատելիս հարկավոր է խաղը դիտարկել որպես ուսումնական խնդրի իրականացման ամենաարդյունավետ միջոցներից մեկը, որպես ուսումնական գործընթացի իրականացման ձև: Ուսուցիչները ներկայացրին խաղեր, որ կիրառում են գրաճանաչության կազմակերպման ընթացքում: Օրինակ՝ «Դարձգիր», «Գտնել ավելորդը», «Վերականգնել խառնագիրը» և այլն:

Այսպիսով, ուսուցիչների շրջանում իրականացրած հարցախույզի արդյունքում կարող ենք փաստել, որ ուսուցիչները հիմնականում ունենում են դժվարություններ գրաճանաչության գործընթացի կազմակերպման ժամանակ՝ պայմանավորված տարբեր գործոններով: Կարծում ենք, որ այդ ամենի մեջ պակաս կարևոր դերակատարում չունեն նաև մեթոդական աշխատանքի ոչ արդիական մոտեցումները:

Համամիտ ենք, որ տպագիր ռեսուրսները, մասնավորապես հետաքրքիր են և արդյունավետ գրաճանաչության կազմակերպման ընթացքում, սակայն այսօր այլևս դրանք բավարար չեն: Նույնը վերաբերում է նաև գրաճանաչության ընթացքում կիրառվող խաղերին. դրանք սիրելի են սովորողների համար, սակայն պետք է լրացվեն նաև էլեկտրոնային խաղերով, որոնց միջոցով էլ հենց սովորողները կարող են գրել – կարդալ սովորել, զարգացնել կարդալու կարողությունը:

2.2. Գրաճանաչության գործընթացի կազմակերպման մեր փորձը

Իր նշանակությամբ, տևողությամբ և խնդիրների առատությամբ առանձնանում է գրաճանաչության այբբենական կամ բուն գրաճանաչության շրջանը: Առանձնացնենք այդ շրջանի ուսումնական, զարգացնող և դաստիարակչական հիմնական խնդիրները.

- Ուսուցանել հայերենի բոլոր հնչյուն - տառերը
- Սովորեցնել ճիշտ համադրել հնչյուններն ու տառերը
- Գործնականորեն ձավորել վայելուչ գրելու կանոնները
- Մշակել պարզ, փոքրաձավալ բնագիրը ամբողջական բառերով սահուն և հասկանալով կարդալու կարողություններ
- Զարգացնել ընթերցանության նկատմամբ սեր և հետաքրքրություն
- Զևավորել ընթերցողական տարրական ունակություններ
- Զարգացնել սովորողների կապակցված խոսքն ու մտածողությունը
- Հաղորդել լեզվական նախնական գիտելիքներ
- Իրականացնել ճանաչողական, դաստիարակչական, զարգացնող, աշխատանքներ՝ նպաստելով երեխայի անձի ներդաշնակ զարգացմանը, ճանաչողական հետաքրքրությունների և պահանջմունքների բավարարմանը
- Զարգացնել հոգեկան գործընթացները:

Բնականաբար, այբբենական շրջանում անցում է կատարվում այբուբենի տպագիր և ձեռագիր տառերի ուսուցմանը: Տառերի ուսուցմանը զուգահեռ շարունակվում են վերլուծական ու համադրական աշխատանքները բառի հնչյունային կազմի շուրջ, որպեսզի ընթերցվող բառի մեջ սովորողը կարողանա տեսնել բոլոր տառերը, կարողանա բառը կարդալ իր ամբողջությամբ՝ բոլոր փոփոխությունները նկատելով ու գրանցելով: Այս հատկանիշներից ամենակարևորը կարդացածը հասկանալն է. որը կարդալու ուսուցմանը զուգընթաց պետք է իրականացվի: Այստեղ ևս շատ օգտակար են ուսումնական բազմաան խաղերը, որոնք տառերի ճանաչման ու բառապատկերի ընկալման գործընթացը ավելի հեշտ ու հաճելի են դարձնում: Ներկայացնենք խաղերի մի քանի օրինակներ:

ՏԱՌԵՐ ԵՎ ՀՆՉՅՈՒՆՆԵՐ

Թերթերում և ամսագրերում վերնագրերը մեծ տառերով են գրված: Մատը դնել որևէ տառի վրա: Խնդրել երեխային, արտասանել նրա հնչյունը: Տառաճանաչումը և համապատասխան հնչյունի արտասանությունը կօգնի երեխային այն մտապահել:

ԱՅԲՈՒԲԵՆԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

Տառեր փնտրելը ոգևորող խաղ է: Փողոցում զբոսնելիս կամ ուղևորության ժամանակ փնտրել տեքստին փոխարինող ճանապարհային նշաններ, գովազդային վահանակներ և այլն: Խնդրել երեխային անվանել տառերը: Հնարավոր է նաև բարդացնել՝ առաջարկելով կարդալ տառակապակցություններ կամ ամբողջական բառեր:

ՓՆՏՐԻՐ ՏԱՌԵՐԸ

Երեխային փոքրիկ հատված տալ թերթից կամ ամսագրից: Խնդրել աչքի անցկացնել յուրաքանչյուր տող և ընդգծել որևէ տառ (օրինակ՝ «ա»): Այնուհետև առաջարկել ընդգծել բոլոր «ա»-երը, «պ»-երը և այլն: Կամ՝ ընդգծել «ա»-ն, եթե նրանից առաջ պ-կա և այլն:

ՎԱՆԿԱՏՈՒՄ ԵՆՔ ԲԱՌԵՐԸ

Աջակցել երեխաներին վարժվելու բառի վանկատման մեջ: Փողոցում քայլելիս կամ խանութում ցույց տալ գրությունները և խնդրել՝

:

- կարդալ բառը
- բառը վանկատել
- հաշվել բառի մեջ վանկերի քանակը:

Այս շրջանում կարդացածը հասկանալու գործողությունը դեռևս որոշակի կերպով առանձին կամ անջատ է կարդալուց. երեխան նախ կարդում է գրվածը, ապա հասկանում: Այս կրկնությունը կամ երկրորդ ընթերցումը փաստորեն հասկանալու համար է արվում. կարդացածի հնչյունային կազմի կրկնությունը միջոց է դառնում նրա բովանդակության մեջ թափանցելու, այն ընկալելու համար: Բառի ու բառաշարքերի ընթերցումն այն առանձնահատկությունն ունի, որ երեխաները բառի մեջ եղած բոլոր տառերը տեսնելու, դրանք իրենց համապատասխան հնչյուններին վերածելու և վանկերի ու ամբողջական բառի մեջ միավորելու հետ միասին պետք է կարողանան պահպանել նաև հայերենին հատուկ բառային շեշտը:

Բառը հեշտ կարդալ սովորեցնելու գործում կարևոր նշանակություն ունեն հատվող այբուբենով կատարվող վարժությունները, երբ երեխաները վանկային ու հնչյունային վերլուծության են ենթարկում բառը, տառային համադրություններ են կատարում և վանկերով ու ամբողջովին կարդում վանկ առ վանկ հավաքած բառը: Մենք մեր պրակտիկայի ընթացքում հաճախ ենք կիրառել մեծադիր և անհատական տառադարանները և խորհուրդ ենք տալիս դրանք դարձնել գրաճանաչության շրջանի ամենօրյա օգտագործման գործիքները:

Օգտակար պետք է համարել նաև նմանությամբ կարդալը, որը հատկապես մեծ կիրառություն ունի բառաշարքերն ընթերցելիս։ Այստեղ ընթերցվող նյութի թե՛ քանակական և թե՛ որակական բարդացում է կատարվում, որովհետև բառաշարքերը կազմվում են յուրաքանչյուր շարքում վանկային կառուցվածքով ու հնչյունային կազմով նման բառերի ընդգրկման սկզբունքով, որպեսզի առաջին բառի ընթերցումը հիմք ստեղծի երկրորդի ընթերցման համար։ Այս բառաշարքերից յուրաքանչյուրում ընդգրկված առանձին խումբ բառերի միջև լինում են և՛ նմանություններ, և՛ տարբերություններ, առաջինը՝ ընթերցումը հեշտացնելու, իսկ երկրորդը՝ բառն արտաբերելուց առաջ այն անպայման մտովի կարդալու համար։ Այս ինքնաստուգումը խիստ կարևոր է, որպեսզի երեխան առանց կարդալու, միայն կռահումով չարտասանի բառը։ Բառակապակցության ընթերցումը ևս իր առանձնանահատկությունն ունի, և դա ուսուցման ժամանակ պետք է հաշվի առնել։

Օգտակար պետք է համարել նաև ընթերցման տեմպի դանդաղեցումը, կրկնաընթերցումը և կարդացածի պատմելը։ Դրանք հնարավորություն են տալիս ճիշտ ընկալելու ոչ միայն կարդացած յուրաքանչյուր բառի բառիմաստը, այլև դրանց միջև եղած տրամաբանական ու քերականական կապերը և ամբողջ նախադասության միտքը, որը ոչ թե նրա մեջ եղած բառերի բառիմաստների պարզ գումարն է, այլ իմաստային բոլորովին նոր որակ։ Կապակցված բնագրի ընթերցումը ևս իր առանձնահատկություններն ունի, որովհետև այստեղ տառի, վանկի ու բառի փոխարեն ընկալման միավորներ են դառնում ամբողջական նախադասու-թյունները, որոնց ընկալումն ու միմյանց հետ կապակցումը երեխայի համար լուրջ դժվարություն է ներկայացնում։

Մեր պրակտիկայի ընթացքում գրաճանաչության ուսուցման կենտրոնում պահել ենք սովորողների խոսքի զարգացումը, որովհետև այն ոչ միայն ուսուցման նպատակն է, այլև միջոց՝ երեխաների մտածողության, աշխարհաճանաչողության ու գիտելիքների զարգացման համար։ Բառապաշարը երեխայի խոսքի, մտածողության ու աշխարհաճանաչողության զարգացման հիմքն է. ամեն ինչ մարդ ընկալում է բառերի մեջ կամ բառերի միջոցով, նույնիսկ շրջապատից ստացած անմիջական տպավորությունները, հույզերն ու ապրումները վերջին հաշվով

կայունանում ու մտապահվում են բառային հիմքով: Այս առումով բառային աշխատանքը կամ բառապաշարի հարստացումը ոչ միայն խոսքի, այլև ընդհանուր զարգացման համար հսկայական ու անփոխարինելի նշանակություն ունի: Յուրաքանչյուր դաս ու ռեսուրս ուսուցիչը պետք է օգտագործի երեխաների բառապաշարը նոր բառերով հարստացնելու համար:

Կապակցված խոսքի ստեղծումը խոսքի զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքների բարձրակետն է, որովհետև այդ ուղղությամբ տարվող աշխատանքների վերջնական նպատակը աշակերտների մեջ կապակցված խոսք ստեղծելու կարողության ձևավորումն է: Խոսք կառուցելու կարողության մշակման տեսակետից, իհարկե, օգտակար են թեմատիկ նկարների շուրջ կապակցված պատմությունների ստեղծումը, սակայն առավել արդյունավետ է, երբ սովորողը խոսում է իր տեսածի ու լսածի, զգացածի մասին: Օրինակ՝ մենք հաճախ ստեղծել ենք իրավիճակներ, երբ սովորողները պատմել են իրենց կյանքի փորձի մասին, հետո նոր աշխատանք ենք տարել հնչյունային լսողության զարգացման, տառերի ճանաչման և դրանք գրելու ուղղությամբ՝ տառուսուցման մեթոդական շղթային համապատասխան:



- Հրահանգ* - Ունկնդրի՛ր բանաստեղծության հատվածները և նկարի՛ր՝ յուրաքանչյուր հատվածին համապատասխան պատկերներ ավելացնելով նկարի մեջ: Աշխատի՛ր ոչինչ չմոռանալ:
- Հրահանգ** - Նկարին նայելով՝ արտասանի՛ր բանաստեղծությունը:

Օգտակար են նաև տրամաբանական խաղերը, («Գիշեր և ցերեկ», «Ով է մոլորվել» և այլն), լեզվական գլուխկոտրուկներն ու ռեբուսները, որոնք կարելի է անցկացնել կենդանիների, թռչունների, բույսերի, ծաղիկների, գործիքների ու այլ առարկաների շուրջ:

ԳԵՂԵՑԿՈՒՀԻՆ ԵՎ ԱՐՔԱՅԱԶՆԸ



- Հրահանգ*- Նախ՝ հայացքով որոշի՛ր, թե որ գեղեցկուհին որ պալատում է ապրում, ապա՝ գեղեցկուհուն ու իր պալատն առանձին-առանձին շրջագծի՛ր նույն գույնով:
- Հրահանգ***- Հորինի՛ր պատմություն գեղեցկուհու, արքայազնի և վիշապի մասին:
- Հրահանգ**- Գեղեցկուհիներից մեկին գողացավ հրեշը: Գեղեցկուհուն նա թաքցրեց իր պալատներից մեկում: Օգնի՛ր արքայազնին փրկել գեղեցկուհուն: Հայացքով որոշի՛ր, թե որ պալատում է գեղեցկուհուն թաքցրել վիշապը և ներկի՛ր այդ պալատը:

Ներկայացնենք գրաճանաչության մեր վարած դասերից օրինակ՝ շեշտադրելով սովորողների խոսքի, մտածողության և ստեղծագործական կարողությունների զարգացմանն ուղղված աշխատանքները:

Դասի պլան
Դասարանը՝ 1- ին
Առարկան՝ Մայրենի
Դասի թեման՝ Ժ, ժ հնչյուն-տառերի ուսուցում
Դասի բնույթը՝ նոր նյութի հաղորդման դաս
Դասի նպատակը և խնդիրները.

- ✓ Ճանաչել Ժ, ժ տպագիր և ձեռագիր տառերը,
- ✓ Հորինել բանավոր պատմություն նկարի շուրջ,
- ✓ Սահուն կարդալ տեքստը,
- ✓ Համագործակցել փոքր խմբերում

Դասի կահավորումը՝ մեծադիր և անհատական տառադարաններ, նկարազարդ, ձեռագիր, տպագիր տառեր, քարտեր՝ խմբային առաջադրանքների կատարման համար, անակնկալների պարկ կամ տուփ, մեծ ժամացույց:

Դասի ընթացքը

Սովորողներին նախապես բաժանել խմբերի:

Նոր նյութի հաղորդումից հետո խմբերին տալ իրենց անվանումները:

1. <u>Անցածի ամփոփում</u>

Փոփկորն հնարի միջոցով կրկնել ծանոթ ձայնավոր և բաղաձայն հնչյուններն ու նրանց տառերը:

Այնուհետև անցկացնել մրցույթ խմբերի միջև՝ ով արագ և ճիշտ կասի նախորդ դասի շուտասելուկը.

Ցոլակը ցատկեց ցից ցանկապատից,
Ցանկապատը ցնցվեց Ցոլակի ցատկից:

2. <u>Նոր տառի ուսուցում</u>

Նոր տառի ներմուծման համար անակնկալների տուփից հանում ենք մի փոքրիկ պատմվածք և սկսում նախապատրաստական զրույցը.

- Երեխանե՛ր, այժմ ես կկարդամ մի փոքրիկ պատմություն: Ուշադիր լսե՛ք, որպեսզի կարողանաք պատասխանել հարցերին:

  «Ժաննան Ժիրայրի քույրիկն է: Նա շատ ժպտերես, ժրաջան, ժիր աղջիկ է: Մի անգամ նա կորցնում է իր ժապավենը և շատ տխրում: Ժիրայրն իր ընկերների հետ գտնում է այն»:

Հարցեր.

- ✓ Ու՞մ քույրիկն էր Ժաննան:
- ✓ Ինչպիսի՞ աղջիկ էր նա:
- ✓ Ի՞նչը կորցրեց նա:

✓ Ովքե՞ր գտան ժապավենը:

Հարցերի պատասխանը լսելուց հետո սովորողների օգնությամբ դուրս բերել պատմության մեջ ամենահաճախ կրկնվող հնչյունը՝ ժ:

Հենց այդ հնչյունով էլ սկսվում են բոլոր խմբերի անունները.

Ժպտերեսիկներ

Ժամապահիկներ

Ժրաջանիկներ

Այնուհետև աշակերտներին առաջարկել հանելուկ, որի պատասխանը նորից ժ-ով է սկսվում, իսկ առարկան գտնվում է անակնկալների տուփում՝ ժամացույց:

3. <u>Ֆիզկուլտդադար</u>
4. <u>Աշխատանք այբբենարանով</u>

Ա) Աշակերտների օգնությամբ հորինել պատմություն թեմատիկ նկարի շուրջ. «Նկարում երևում է Հանրապետության հրապարակը: Այնտեղ շրջում են զբոսաշրջիկները: Բոլորն ուրախ են, գոհ, ժպտերես: Շենքին ամրացված է մեծ ժամացույց: Ժիրայրը ստուգում է իր ձեռքի ժամացույցը: Նա գնում է երաժշտական դպրոց»:

Նկար-պատմությունից առանձնացնել ժ-ով սկսվող և ժ հնչյունը պարունակող բառերը՝ Ժիրայր, ժամացույց, ժպտերես, ժիր, երաժշտություն:

Ժամացույց բառը որպես մեկնաբառ ենթարկել վանկահչյունային վերլուծության:

Բ) Ընթերցել այբբենարանի համապատասխան էջը՝ կարդալու տարբեր տեսակներով:

5. <u>Տառի գրուսուցում</u>

Ա) Ցույց տալ ժ, Ժ տառերի գրելաձևը և փորձել օդում, գրատախտակին, պատրաստել ժապավենից:

Բ) Աշխատանք գրատետրերում

6. <u>Ստեղծագործական աշխատանքներ Այբբենարանով</u>

Ա) Միասին արտասանել ժ-ի երկտողը.

Պտույտներով սլաքներիս

Ժամանակն եմ ձեզ ցույց տալիս:

Բ) Խմբային աշխատանքի համար խմբերին բաժանել քարտեր, որոնց վրա գրված են առաջադրանքները.

ԽԱՌՆԱԳԻՐ

նտե-_____

վկատ-_____

տրաօ-_____

կկիշո-_____

երտ- _____

ՍԿԶԲՈՒՄ, ԹԵ ՎԵՐՋՈՒՄ...

ա

շուն

մպ

կրի

օպեր

ման

ՎԱՆԿԱԽԱՂ



* Առաջադրանքի կատարման ժամանակ հետևել խմբերի աշխատանքին և խրախուսել խմբի անդամներին ակտիվ լինել:

7. <u>Անդրադարձ և ամփոփում</u>

- Ո՞ր հնչյուն-տառը սովորեցինք:
- Ինչպե՞ս է արտասանվում այդ տառի հնչյունը:
- Ձայնավո՞ր է, թե՞ բաղաձայն:

Այսպիսով, գրաճանաչության ողջ ընթացքում բացի հնչյուն – տառերի ճանաչումից, գրել – կարդալու կարողությունների զարգացումից, շատ կարևոր է նաև ծրագրային հետևյալ պահանջների բավարարումը.

- Հաղորդակցվելու պահանջի բավարարում, ինքնաարտահայտման կարողությունների ձևավորում,
- Տեսողական - պատկերային մտածողության զարգացում,
- Համեմատելու, հակադրելու և դասակարգելու կարողության ձևավորում,
- Լսելու և խոսելու կարողությունների զարգացում,
- Մտքերը հասկանալի ձևակերպելու կարողության ձևավորում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Հայ գրաճանաչության պատմությունը հարուստ է գրաճանաչության մեթոդներով, որոնցից հիմնականը և երկարակյացը հնչյունային կամ հնչական մեթոդն է, որը համապատասխանում է մեր լեզվի բնույթին և առանձնահատկություններին:
2. Առաջնորդվելով ժամանակակից դպրոցի սովորողակենտրոն պահանջով՝ անհրաժեշտ է ավելի ճկուն դարձնել գրաճանաչության դասի կառուցվածքը՝ հաշվի առնելով յուրաքանչյուր սովորողի մտավոր, ֆիզիկական, հոգեբանական, տարիքային և այլ առանձնահատկությունները, կազմակերպել տարբերակված ուսուցում:
3. Գրաճանաչության գործընթացի արդյունավետությունը մեծապես պայմանավորվում է սովորողների խոսքի և հոգեկան գործընթացների զարգացման մակարդակով, որոնց զարգացմանը մեծապես նպաստում են իրավիճակային քննարկումները, դերային խաղերը, խմբային քննարկումները, ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը:
4. Գրաճանաչության կազմակերպման դժվարությունները հաղթահարելու համար կարևոր է ապահովել ուսուցման մեթոդների ու միջոցների բազմազանությունը՝ հարմարեցնելով դրանք սովորողների կեսափորձին, հետաքրքրություններին ու առանձնահատկություններին:
5. Տպագիր ռեսուրսների հետ արդյունավետ է գրաճանաչության կազմակերպման ընթացքում կիրառել նաև էլեկտրոնային կրթական ռեսուրսներ՝ առաջադրանքներ, խաղեր, տեսաշարեր, անիմացիոն հոլովակներ և այլն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գյուլամիրյան Ջ. Հ., Մայրենիի ուսուցման մեթոդիկա.- Զանգակ, 2018:
2. Գյուլամիրյան Ջ. Հ., Վեց տարեկանների ուսուցման առանձնահատկություններն առաջին դասարանում.- Եր. Լույս, 1986:
3. Տեր - Գրիգորյան Ա. Ե., Հայոց լեզվի մեթոդիկա.- Եր., Լույս, 1980:
4. Վաչագան Ա. Սարգսյան, Այբբենարան: Եր., 2018:
5. Միրումյան Մ. Վ., Հայոց լեզու,.- Եր., 2012: